№ 269 ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 — 1904 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7 № 269

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒ ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԿԱՅ **1905** ԹԻԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներին յաջորդող օրերից.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տան և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տան ամսվանը՝ 9 ր., ութ ամսվանը՝ 8 ր., հինգ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մտքի փոխանակութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թատրոն և երաժշտութիւն. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նոր-Կօնկօրդատ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄՏՔԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԻՒՆ

—

Մեր դարի ոգու ամենաուժեղ արտայայտութիւններից մէկն է մտքի փոխանակութեան այն մեծ զարգացումը, որ կարողութիւն է տալիս ոչ թէ մի երկրի ժողովրդին, այլ և ամբողջ մարդկութեանը կատարել մտքի ընդարձակ և սերտ շփումներ, միասին քննել և ուսումնասիրել կեանքի հարցերը, հաւաքական ոյժով մշակել միջոցներ առաջ տանելու երկրի բարգաւաճման և ժողովրդի առաջադիմութեան ծանրակշիռ գործը։

Կան ազգեր, որոնք շատ քիչ են օգտվում մտքի փոխանակութեան հրապարակական ձևից։ Ցաւելով պէտք է արձանագրենք, որ այդ ազգերի շարքումն են նաև հայերը։ Ճիշդէ, մի քանի տասնեակ տարիներից ի վեր մենք ունենք մամուլ, բայց լրագրական գրականութիւնը շատ քիչ է զարգացած մեզանում և մեր ժողովուրդը դեռ սովոր չէ հրապարակական գործունէութեան։ Լրագիրների և լրագրական գործողների թիւը շատ սահմանափակ է, լրագիրը մուտք չէ գործել ժողովրդի ոչ միայն ստորին, այլ և նոյն իսկ միջին մասերը ընդարձակ ծաւալով։ Կեանքը իր բազմատեսակ հոգսերով և խնդիրներով, ժողովուրդը իր մտածմունքներով և զգացմունքներով դեռ շատ թոյլ կերպով են արտայայտված գրականութեան մէջ։ Մարդիկ սովոր չեն միմեանց հետ խօսել, վիճել և կեանքի խնդիրները պարզել հրապարակական խօսքի միջոցով։

Սովոր չեն և սովորեցրած էլ չեն։ Մեր երկրի անցեալը մեզ չէ ընտելացրել հրապարակական գործունէութեան։ Պարսկաստանը և Թուրքիան, մեր երկրի գործերի հին կարգադրիչները, իրանք մինչև այժմ զուրկ են այն վայելքներից, որ պէտք է նրանց տար մամուլը։ Իսկ վերին տասնիններորդ դարում, երբ մենք ոտ կոխ եցինք նոր կուլտուրայի ասպարէզի վրա, մենք մի կողմից գտնվում էինք հին կեանքի աւանդութիւնների ճնշման տակ, իսկ միւս կողմից չէինք տեսնում խրախոյս նոր կեանքի ղեկավարներից։

Հին ասիական ազգերը չը կարողացան օգտվել այն մեծ ոյժից, որ տալիս է մամուլը։ Նրանք անկարող եղան պետութեան և հասարակութեան օգտին շահագործել հաւաքական մտածողութեան այն զօրութիւնը, որ այնքան նպաստեց եւրոպական ազգերի առաջադիմութեան։ Ժամանակ է, որ գոնէ այժմ, քսաներորդ դարի մէջ, մենք լաւ ըմբռնենք հրապարակական խօսքի փրկարար նշանակութիւնը և նրան դարձնենք իրրև մեր առաջադիմութեան ամենամեծ գործօններից մէկը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

(Տօլստոյի «Յարութիւն» պիէսը բեմի վրա.—Երգչուհի Պապայեանի դատրօլները.—Մասքնէի «Մանօն» օպերան.—Բարխուդարեանի կոնցերտը)

I

Տօլստոյի նշանաւոր «Յարութիւն» վէպը, որ այնքան մեծ աղմուկ հանեց գրական աշխարհում, ներկայումս վերածված է պիէսի և մի քանի շաբաթ սրանից առաջ դրվեց բեմի վրա Պետերբուրգում։ Թիֆլիսը յետ չը մնաց մայրաքաղաքից և Թիֆլիսում գտնվող Մէյերհոլդի դրամատիական խումբը վերջին շաբաթվայ ընթացքում երեք անգամ ներկայացրեց այդ պիէսը Արտիստական ընկերութեան թատրոնում։

Տօլստոյի վէպը բեմի համար յարմարեցրել է Սրբէնին և անուանել է պիէսը, գլխաւոր հերոսուհու անունով, «Կատիւշա Մասլօվա»։ Պիէսը բաղկացած է ութ տեսարաններից։ Բացի գլխաւոր գործող անձերից պիէսի մէջ դուրս են բերված բանտարկեալներ, պահապաններ, սպասաւորներ, թւով աւելի քան երեսուն անձ։

Պիէսի մէջ դուրս բերած տեսարանները կարելիին չափ հարազատ ընդօրինակութիւններ են վէպից։ Աւելացրած կամ փոփոխած տեղեր շատ քիչ կան։ Չը նայելով այդ հանգամանքին՝ պիէսը չէ թողնում այն ուժեղ, ցնցող և բազմաթիւ խորհրդածութիւններ ծնող տպաւորութիւնը, որ մենք ստանում ենք վէպից։ Պատճառը հասկանալի է։ Պիէսի մէջ հանդէս են բերված վէպի եղելութիւնները, դիրքերի փոփոխութիւնները։ Իսկ հոգեբանական վերլուծութիւնները, գեղարուեստական նկարագրութիւնները, հասարակական հիմնարկութիւնների և նրանց մէջ գործողների ընորոշումները, որոնք հիացում են պատճառում վէպի ընթերցողին, մնացել են պիէսից դուրս։ Պէտք է ենթադրել, որ արտաքին պատճառներ խանգարել են Սրբէնինին պիէսը աւելի լիակատար կերպով մօտեցնելու ընագրին։ Այնպէս որ վերջ ի վերջոյ դուրս է եկել միջակ արժանաւորութեան մի պիէս, հետաքրքրական գծերով։

Շնորհակալ պէտք է լինել Մէյերհոլդին, որ շտապել է թատրօնական սեզօնի այդ նորութիւնը անմիջապէս տալու Թիֆլիսի հասարակութեան։ Պիէսը խաղացվում է լաւ անսամբլով։ Գլխաւոր հերոսուհու դեր կատարող Վեսնօվսկայա բնական է, ամբողջացրել է Կատիւշայի տիպը և գիտէ կենտրոնացնել իր վրա հանդիսականի ուշադրութիւնը։ Իշխան Նեխլիւդովի դեր կատարող Կօստրօմսկոյ առհասարակ վատ չէ իր դերում, բայց իր ամբողջութեամբ չէ արտայայտում իշխանի տիպը, թէկուզ զղջացած և կերպարանափոխված իշխանի։

«Կատիւշա Մասլօվա» պիէսը Թիֆլիսի բեմի վրա ներկայացվում է ճոխ և ընորոշ դեկօրացիաներով։

II

Երգչուհի Պապայեանի առաջին գաստրոլի մասին մենք արդէն խօսել ենք։ Այնուհետև նա դուրս եկաւ երկու օպերաներում՝ Զայկօվսկու «Պիկօվայա դամա» և Գունօի «Ֆաուստ» օպերաներում։

Լիզայի դերը («Պիկօվայա դամա» օպերայի մէջ) օր. Պապայեանի ամենաաջող և լաւ ուսումնասիրված դերերից մէկն է, որով նա հիացում է առաջ բերում հանդիսականների մէջ։ Լիզայի զգացված, դրամատիական երգը առուի մօտ իր խոր վշտով, անձնուէր սիրով արտայայտված է Պապայեանի երգի մէջ այնպիսի հմտութեամբ և ոյժով, որ կարող է գոհացնել ամենամեծ երաժշտական պահանջներն անգամ։

Մարգարիտայի դերում («Ֆաուստ» օպերայի մէջ) օր. Պապայեան գիտէ քնքշութեան և անմեղութեան մէջ հանդէս բերել առաջին սիրոյ նախ երկչոտ և ապա բուռն զեղումները։ Երրորդ տեսարանը տպաւորիչ է։ Երգչուհու երգի կատարեալ տպաւորութեան խանգարում է այն, որ «Ֆաուստի» դեր կատարողը (Բօղդանովիչ) սառցնում է տեսարանը։

Այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 7-ին, օր. Պապայեան հանդէս կը գայ Տատեանայի դերում «Եվգենիյ Օնէգին» օպերայի մէջ։

III

Թիֆլիսի արքունական թատրոնում, շաբաթ օր, դեկտեմբերի 4-ին, տրվեց Մասքնէի «Մանօն» օպերան։

Դա ախորժելի երաժշտութիւն ունեցող մի օպերա է, որ գեղեցիկ մշակված նուագածութեան հետ միացրել է աջող բեկիտատիվներ։ Առանձին երգեր ամբողջացրած ձևով չը կան այդ օպերայի մէջ, բայց երգի և եղանակների գոյութիւնը դուք զգում էք օպերայի շատ տեղերում, իրրև մասերը միացնող ընդհանուր գունաւորութիւններ։

Այդ օպերայի բովանդակութիւնը վերցված է աբբա Պրեվօի յայտնի նոյնանուն հեղինակութիւնից։ Օպերայի հերոսուհին, Մանօն Լէսկօ, կենսուրախ, մանկական զուարթութեամբ շուտ զրաւվող մի բնաւորութիւն է, որը խաբվում է մարդկանցից, զոհ դառնում մանաւոր ինտրիգների և իրան համար անկատելի կերպով անցնում ձեռքից ձեռք իրրև մի թեթև արարած, իսկ յետոյ հոգեպէս տանջված և ուժասպառ վերջացնում է իր կեանքը։

Մանօնի դերը կատարող երգչուհի Օրէլ լաւ երգում է և խաղում, բայց նրա երգածը, լինելով թէ մշակված և թէ նուրբ, զուրկ է այն ջերմութիւնից և զգացվածութիւնից, որ դարձնում է երգը գրաւիչ և ազդեցիկ։ Իրրև օրինակ, թէ ինչպէս կարելի է մտածված, զգացված, խելացի և գրաւիչ երգել, ցոյց տուեց նոյն օպերայի մէջ երգիչ Դոնսկոյ կոմս Դէ-Գրիէի դերի մէջ։ Լաւ էր և Սպերանսկիյ կոմսի հօր դերի մէջ։

IV

Երգիչ Ս. Բարխուդարեան կիրակի, դեկտեմբերի 5-ին, մասնակցութեամբ Պօզնէեվայի, Մասաջանի, Քօրիձէի և Ն. Տիգրանեանի տուեց մի կոնցէրտ, որ գրաւել էր բաւական մեծ բազմութիւն Արտիստական ընկերութեան դահլիճը։

Բարխուդարեանի ձայնը ընդարձակվել է, թաւացել։ այդ յատկութիւնը արդէն արձանագրվել է մամուլի մէջ։ Նրա տուած կոնցերտները իրրև նախնական, յանձնարարական կոնցերտներ արդէն կատարել են իրանց դերը և վերջացրել։ Հանդիսականները խրախուսում են, բարի ցանկութիւններ են յայտնում և եղած պակասութիւնների վրա նայում են իրրև անցողական երևոյթների վրա։ Ոչ քննադատել, այլ խրախուսել—ահա ընդհանուր զգացումը, որ ուսի հասարակութիւնը։ Ցանկալի է, որ Ս. Բարխուդարեանը կատարելագործէր իր վարժի ցանկութիւնը և լրացնէր իր երաժշտական կրթութիւնը, որպէս զի կարողանար իր երիտասարդական տարիներում օգտվել երաժշտական կրթութիւնից և հասարակութիւնն էլ նայէր նրա վրա ոչ իրրև մշտական սկսնակի, այլ հասուն երգչի վրա։

Բացի իտալերէն և ռուսերէն կատորներից, երգեց և հայերէն երգեր, որոնցից ամենաաջողն էր «Արի իմ սոխակ»։

Մասաջան երգեց ճաշակով և զգացմունքով. բայց նրա ձայնը վատառ չէ բոլոր տեղերում։ Բնորոշ և գեղեցիկ նախադասութիւնների հետ լսվում են դողդոջուն և հարևանցի կերպով ձևակերպված կատորներ։

Քորիձէ ճաշակով նուագեց վիոլօնչելի վրա Գօդարի հեղինակութիւնը։ Պօզնէեվա ունեցաւ միջակ աջողութիւն։ Տիգրանեան նուագեց և արժանացաւ բուռն ծափահարութիւնների։

Սիրող

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Նոյեմբերի 20 ին

Որ Երևանը հետզհետէ զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս հասարակական կեանքի զանազան հանգամանքներում,—դա ակներև փաստ է։ Ակներև է և այն, որ տեղական ժողովրդի դասակարգերը մեծ մասամբ յարմարվում են ժամանակակից կեանքի առաջաւոր պայմաններին։ Աւելի ուրախալի է այն, որ նոյն իսկ Թուրք հասարակութեան որոշ դասակարգեր մօտ յարաբերութիւն և բարեկամական ձգտումներ ունեն դէպի հայերը և այդ շնորհիւ հայ երիտասարդութեան, որը ամեն ջանք գործ է դնում միշտ խաղաղ ապրելու և սերտ կապ պահպանելու հարևան Թուրք հասարակութեան հետ, մուացնել տալով նախկին թշնամական յարաբերութիւնները և դրացիական ընդհարումները, որոնք ժամանակի ընթացքում այս և այն կերպ արտայայտվել են հայ և Թուրք դասակարգերում։ Աւելորդ չէ յիշել, որ կար ժամանակ, երբ Երևանի հայ և Թուրք ժողովրդի մէջ մի տեսակ անջրպետ էր նկատվում և Թուրքը ձգտում էր հայի դէմ ճնասակար միջոցներ որոնել և ընդհակառակը, հայն էլ յետ չէր մնում այդ ընդհանուր հոսանքից։ Սակայն ժամանակն ամեն բան փոխեց. այժմ, իրրև դրացիներ, Երևանի հայ և Թուրք հասարակութիւնները, յօգուտ իրանց ընդհանուր դրացիական շահերի, բարեկամական ձեռք են մեկնում իրար։ Դա ուրախալի երևոյթ է։

Մի բան միայն մխիթարական չէ Երևանում, այն, որ առևտուրը ընկած դրութեան մէջ է։ Այդ հանգամանքը շատերը վերագրում են երկաթուղուն, որը եթէ մի կողմից զարկ տուեց Երևանի նահանգի գիւղատնտեսական պայմանների զարգացման, միւս կողմից իրը թէ ճնասեց վաճառականութեան, քանի որ շատերի կարծիքով ամեն մի անշան առևտուր անող կամ, ինչպէս իրանք են ասում, ամեն մի

տեղից վեր կենողը՝ ուղղակի վազ է տալիս դէպի Թիֆլիս իր գնումներն անելու ամենահեշտ միջոցներով։ Բայց երրորդ կողմից երկաթուղին մեծ օգուտ է տալիս տեղական արդիւնաբերութեան և զանազան նպարեղէնների արտահանութեան. դա անուրանալի է։ Սակայն ինչ կը լինի ապագայում, երբ երկաթուղին իր ակօսը կը ձգէ էլ աւելի հեռու շարունակելով իր ուղին դէպի Պարսկաստանի սահմանագիծը, դա էլ կը տեսնենք շատ շուտով։ Իսկ առ այժմ կարելի է գալ այն եզրակացութեան, որ մի կողմից երբ երկաթուղին մեծ օգուտ է բերել ժողովրդի մի որոշ դասակարգին, միւս կողմից, ընդհակառակը, նա ազդել և մեծ վնասներ է հասցրել հասարակութեան միւս դասակարգերին։

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, դեկտեմբերի 6-ին, Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի Անուանակոչութեան տօնի պատճառով գոհաբանական մաղթանք կատարվեց Թիֆլիսի Ալէքսանդր Նեվսկու զինուորական տաճարում։ Մաղթանքի ժամանակ արքէպիսկոպոս լավեց Թագնօթի 21 հարուածը։ Մաղթանքին ներկայ էին զինուորական և քաղաքացիական բոլոր բարձր պաշտօնեաները։ Քաղաքը զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառութիւն կար։ Գոհաբանական մաղթանքներ կատարվեցին Հայոց Վանքի մայր եկեղեցում և միւս դաւանութիւնների աղօթատներում։

—

Վեհափառ Կաթուղիկոսի գալուստը Թիֆլիս յետաձգվել է մի քանի օրով հիւանդութեան պատճառով։

—

Մեզ խնդրում են յայտնել հետևեալը։ Մի քանի օր սրանից առաջ Շամախուց Թիֆլիս եկած մի հոգեկան հիւանդ, Արշակ Տէր-Ոսկանեանց անունով, անհետացել է։ Նրա մայրը որոնում է որդուն և խնդրում այն անձանց, որոնք գիտեն հիւանդի բնակութեան տեղը, յայտնեն այդ մասին իրան հետևեալ հասցէով. Սերբերբեանցի բեագ, № 30, Բալասի Օսմանցեանին։

—

Զբաղմունքի հարկի օրէնքները վերաքննելու համար հրաւիրված յանձնաժողովի մէջ մասնակցող առևտրի և արդիւնագործութեան ներկայացուցիչները ֆինանսների մինիստրութեանը մի զեկուցում են ներկայացրել, որով ապացուցանում են, որ Ռուսաստանն արդէն բաւականաչափ հասունացել է և կարելի է արդէն մտցնել եկամտային հարկ։

—

Բաթումում հիմնվում է մարմնամարզական կամ գիմնաստիկայի ընկերութիւն, որը կազմում է Պետերբուրգի համանուն ընկերութեան մի ճիւղը։ Այդ նոր ընկերութեան անդամների թիւը, «Черн. Вѣст.» լրագրի ասելով, հասնում է արդէն 80-ի։

—

Մոսկվայի «Քրիստոնէական Օգնութեան Ընկերութեան» մէջ կատարված զեկուցումները տեղի են տուել ներքին գործերի մինիստրութեանը հերթական հարց դարձնել կանոնաւոր ամսական կառավարական կօնտրոլ հաստատել բոլոր բարեգործական ընկերութիւնների եկամուտքի վրա։

—

Անցեալ օրը, դեկտեմբերի 5-ին, Թիֆլիսի քաղաքային ուղղավան էին հրաւիրված Միջի-փողոցի կամ Հայկական բազարի կալուածատէրերը։ Ինչպէս յայտնի է, էլէքտրաքարշը Երևանեան հրապարակից մինչև Շէյթան բազար տանելու համար, պէտք է անցկացնել Միջի փողոցով. նա յուշեցնում է Աղա-Մահմադխանի ժամանակները։ Քարշակ անցկացնելու համար՝ պէտք է լայնացնել, քանդելով մի քանի շէնքեր կամ ամբողջապէս, կամ մասամբ։ Ահա այդ շէնքերի տէրերին էին հրաւիրել անցեալ օրը Ուղղավա, որպէս զի նրանցից իմանան իրանց կալուածների գները և դրա համեմատ որոշում կայացնեն գները վճարելու և քանդելու մասին։ Բանից երևաց, որ կալուածատէրերի ախորժակները հսկայական են։ Օրինակ՝ մի կտոր հող, որ միայն 3 քառակուսի սաժէն է, և որի վրա կայ մի խարխուլ խանութ, տէրը գնահատում է 5,000 ր., կամ մի ուրիշը իր 1,3 սաժէն հողի համար ուզում է 4,000 ր. և այլն։ Իսկ մեացած կալուածների տէրերը ժամանակ խնդրեցին գրաւոր յայտնելու իրան կալուածների գները։ Ուղղավան նրանց պլանները ձմեռվայ համար դեռ անյայտ որոշեց իր վճիռը յետաձգել, մինչև որ բոլոր կալուածների տէրերից գներն իմանայ։ Միայն մի բան են մոռանում կալուածատէրերը—այն, որ ուղղավան կարող է իր սեփական գնահատութիւնով միայն բաւականանալ և վճարել գներն իր բարեհայեցողութեան համաձայն։

—

«Русь» լրագիրը հաղորդում է, որ կառավարական գինեվաճառութեան կենտրօնական վարչութիւնը մշակում է մի ծրագիր պետական գինիների կամ օղիների գներն աւելացնելու վերաբերութեամբ։ Այժմ հաւաքում են ֆինանսների մինիստրութեան ձեռքում եղած բոլոր օժանդակիչ նիւթերը։ Լուր է պատում, որ մտադրութիւն կայ ամեն մէկ վեդրօի գինը 40 կոպէկ աւելացնել։ Այդ աւելումը պէտք է տարեկան 10 միլիոն բուբլի նոր եկամուտ տայ։

—

«Н. Д.» լրագիրը դրում է. «С. П. В.» լրագրի հրատարակիչ իշխան Է. Է. Ուխտօմսկին 2 տարի առաջ, մի յատուկ որոշումով, զրկվեց իր չարաբաստիկ լրագիրը խմբագրելու իրաւունքից։ Այդ օրվանից մինչև այժմ լրագիրը տարվված եղաւ փոխել 3 խմբագիրներ։ Այժմ իշխանին թոյլ է տուել ներքին գործերի մինիստրը՝ հրատարակել մի նոր լրագիր, «Разсвѣтъ» անունով։ Այդ լրագիրը լոյս է տեսնելու առանց նախնական ցենզուրայի։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Նորերս վերջապէս բաղդ ունեցանք լսել մեր եկեղեցիներից մինում, Ս. Յովհաննէս մայր եկեղեցում, քառաձայն ներդաշնակ երգեցողութիւն։ Երգեցիկ խմբի մէջ բացի տղաներից կան նաև օրիորդներ, տեղական դպրոցների աշակերտուհիներից։ Խմբի հէնց առաջին դէբիւտից յետոյ եկեղեցու աւագ քահանան, օրիորդների մասնակցութիւնը ոչ-աստուածահաճոյ գործ համարելով, արգելեց նրանց երգել եկեղեցում, և այդպիսով խումբը, զրկվելով իր ոյժերի նշանաւոր մասից, զրկվեց նաև կարգին, կանոնաւոր երգելու հնարաւորութիւնից։ Խմբապետին տէրտէրը բացարձակ յայտնել է, որ եթէ մէկ էլ աղջիկները երևան եկեղեցում երբև երգչուհիներ, կը բռնէ նրանց թեերից ու դուրս կը նետէ եկեղեցուց։ Խմբապետը դիմել է բողոքով տեղական հոգևոր կառավարութեան։ Եթէ վերջինս նոյնպէս օրիորդների մասնակցութիւնը խմբում գտնէ կորստաբեր եկեղեցու համար, սրբապղծութիւն համարէ այդ համակրելի, անմեղ ու քաջալերման արժանի բանը, այն ժամանակ, յուսով ենք, որ մեր թեմի առաջնորդ Գարեգին եպիսկոպոսը, որի ուշադրութիւնն էլ ենք հրաւիրում այս երկտողով այդ վրդովեցուցիչ դէպքի վրա, կը շտապի յիշեցնել մեր հոգևոր գործերը ղեկավարող հայրերին մի շատ դիւրըմբռնելի բան, —այն, որ միջին դարերը վաղուց անցել են, ու մենք այժմս ապրում ենք քսաներորդ դարում»...

—

ՍՏԱՒՐՕՊՕԼԻՑ մեզ հաղորդում են. «Այստեղի «Ժողովրդական կրթութեան նպաստող ընկերութեան» հրաւէրով նախկին Գեորգիևսկան ակադեմիայի պրոֆէսօր, նշանաւոր էնտօմօլօգ Կ. Է. Լինդեման, որը յայտնի է նաև հացաբոյսերին վնասող միջատների դէմ ուղղված իր համակրելի գործունէութեամբ, տեղական հասարակական ժողովարանի դահլիճում երկու հանրամատչելի դասախօսութիւն կարդաց, որոնց նիւթն էր «Միջատների հոգեկան կեանքը» և «Ռուսաստանի կենդանիների ծագումը»։ Մոգական պատկերով լուսաբանված երկու դասախօսութիւններն էլ շատ հետաքրքիր ու մատչելի էին և գրաւել էին մեծ հասարակութիւն։ Ապա յարգելի պրոֆէսօրը առաջին դասախօսութիւնը կրկնեց յատկապէս աշակերտների համար և այնպիսի մեծ հմտութեամբ, որ նոյն իսկ տարրական դպրոցների աշակերտները լաւ ըմբռնեցին և վերջը իրանց հրճուանքն ու շնորհակալութիւնը յայտնեցին ծերունի պրոֆէսօրին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋը

Լուրեր պատերազմի բեմից։ Լօնդօնից հեռագրում են, թէ Օկուի բանակում գտնվող թղթակիցը հեռագրում է նոյեմբերի 28-ին. «Օկուի բանակի հանդէպ կանգնած ռուսները գիշեր ու ցերեկ հարուածում են թնդանօթներից և հրացաններից, բայց եապօնացիները նրանց չեն պատասխանում։ Ռուսների արշաւումն դէպի հարաւ չէ սպասվում մօտերս, բայց նրանց պլանները ձմեռվայ համար դեռ անյայտ են։ Սաստիկ ցրտեր են կանգնած։ Եապօնացիների պատրաստութիւնները ձմեռվայ համար գրեթէ ամբողջովին վերջացած են։ (Р. А.)։

Սէուլից հեռագրում են «Daily Telegraph» լրագրին, թէ ցուցմունքներ կան, որ ռուսները սաստիկ աւելացրել են իր նց զօրքերի թիւը Պօսիէտի ծոցում։ Նրանք կառուցանում են շարունակ ամրութիւններ Տումէն գետի հիւսիսային ափի վրա և ձգել են կամուրջ, որը մինչև այսօր անհնարին էր թւում։ (Спб.А.)

Տեղեկութիւններ Պօrs-Արտուրի մասին։ Բերլինից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին. «Այստեղ հրատարակվել են տեղեկութիւններ Պօրտ-Արտուրի դրութեան մասին, աւելի նրպատասուր և այն ևս ոչ Եապօնիայից հաղորդված։ «Lok. Anz.» լրագրի թղթակիցը Մուկդէնից հեռագրում է նոյեմբերի 28-ին, թէ ամրոցների գօտին ամենևին չէ խախտված։ 203 մէտրանոց բլուրը գտնվում է Անցուշանի և Էոցիշանի մէջտեղ։ Արևմտեան կողմից նա պատսպարված է Պալունշան ամրոցով, որը դեռ եապօնացիները չեն վերցրել։ Անձնատուր լինելու մասին խօսք անգամ չէ կարող լինել։ Ամրոցները շարունակում են պաշտպանվել անկախօրէն։

Պօրտ-Արտուրը պաշարող եապօնական բանակում գտնվող «Daily News» լրագրի թղթակիցը հեռագրում է, որ պօրտ արտուրցիները չոգտվեցին զինադադարով՝ սպանվածներին և վիրաւորներին 203 մէտրանոց բլրի վրա հաւաքելու համար, որի մասին խնդրել էր գեներալ Ստեսսելը և որին համաձայնութիւն էին տուել եապօնացիները։ (Русь)

Պօrs-Արտուրը եւ միջնորդութեան հարցը։ «N. Freie Presse» լրագրի Լօնդօնի թղթակիցը հեռագրում է. «Այստեղի գործակալութիւնները հաղորդում են, որ լորդ Լանսդաունի և Ֆրանսիական դեսպանի մէջ կայացաւ խորհրդակցութիւն, որին մասնակցեց նաև դաշնագրային և միջազգային իրաւունքի հարցերի խորհրդատուն։ Դիպլոմատիական շրջաններում սաստիկ հետաքրքրվեցին այդ խորհրդակցութեամբ։ Շատերը հարցնում էին թէ ինչի մասին էր խօսվում։ Ինձ հաղորդում են լաւատեղեակ աղբիւրից, որ խօսքը Պօրտ-Արտուրի վիճակի մասին էր։ Հակառակ բոլոր հերքումներին, հաշտարար միջնորդութեան հարցը և ոչ մի բոպէ դիպլոմատիան աչքից չէր թողնում հէնց պատերազմի սկզբից։ Նրա մասին այժմ էլ խորհրդակցում են։ Այդ պատերազմը պէտք է և կարող է աւարտվել միայն պետութիւնների միջնորդութեամբ և չը կայ անհնարին բան, եթէ այդ խնդրի մասին մինչև տարվայ վերջը լուրջ վճիռ կայացնվի։ Իմ խօսակիցը, մի բարձրաստիճան դիպլոմատ, նկատեց դեռ, որ ձեռնհաս շրջանների համոզմունքով, պատերազմի վերջը, այսինքն վճռական ճակատամարտերի շրջանը շուտով կը հասնի, ոչ թէ մի քանի շաբաթից, այլ մի քանի օրից յետոյ։ Պէտք է յուսալ, որ Պօրտ-Արտուրի անկմամբ պատերազմը վախճան կը ստանայ։ Ոչ ոք, նոյն իսկ Ռուսաստանի լաւագոյն բարեկամներին բաց չառնելով, չէր հաւատում, որ Պօրտ-Արտուրը այնքան երկար կը դիմանայ։ Կարող եմ հաւատացնել ձեզ—ասաց խօսակիցս,—որ այն սկզբունքը, որի հիման վրա կը կայանայ հաշտարար միջնորդութիւնը, արդէն որոշված է, պլանը մշակված և շարադրված է թղթի վրա։ Ի հարկէ, նա չի յայտնվի վաղաժամ։ (Б. Вѣд.)

ՆՈՐ ԿՕՆԿՕՐԴԱՏ

«Մշակի» ընթերցողներին արդէն յայտնի է, որ Ֆրանսիայի և Վատիկանի միջև ընդհարումը քանի գնում՝ սաստկանում է։ Գուցէ վերջնական պառակտումն այնքան էլ հեռու չէ, որքան կարծում են լաւատեսները։

Ֆրանսիական կառավարութիւնն արդէն իսկ լուծված է դիտում Նապոլէօնի կօնկօրդատը։ Մնացած փոքրիկ աւերակներն էլ ինքն է ուզում քանդել, առաջարկելով եկեղեցու բաժանումը պետութիւնից։

Ֆրանսիան, կաթոլիկ եկեղեցու աւագ դուստրը, երես է դարձնում Վատիկանից։

Ո՞ւր դիմէ պապը, որ վեհապետի դուռը բաղխէ, որի վրէն փութաթէ իր նոր կօնկօրդատը... որին առաջարկէ իր շահերի պաշտպանութիւնը Հեռաւոր և Մօտաւոր Արևելքներում։

Չը մոռանանք միայն՝ որ կաթոլիկ եկեղեցին իր այդ առաջարկների հետ միասին փութաթել է ուղում նոր «աւագ դստեր» վզին նաև իր բազմաթիւ միաբանութիւնները—իր դոմինիկեաններին, կարմելիտներին, ֆրանցիսկեաններին, Սակրէ-կէօրը և այլն, և այլն, և այլն... իսկ դրանց մէջ նաև «ամենասուրբ Լայօլլայի» փառապանծ եզուիտներին...

Երկար որոնելու պէտք չը կայ։

Վիլհելմ կայսրը պատրաստ է։ Նա նոյն իսկ բէվէրանսներ է անում պապին, կօկէտութիւններ գործ դնում, կոտրատվում է կաթոլիկ կղերի հետ։

Բայց, fi donc! չէ կարելի—Վիլհելմ կայսրը, ինչ էլ որ լինի, լութերական է, նզովվող ու նզովված բողոքական։ Անյարմար է «աղանդաւորի» հետ դաշնակցել։

Ու պապը նորից որոնում է։

Չար լեզու ունի իտալական «Avanti» լրագիրը։

Նա պնդում է, որ պապն արդէն գտել է մի այնպիսի համբերատար, երկարակամ երկիր, որի մէջքին դնէ Ֆրանսիայի դէն շպրտած ծանր բեռը։

Այդ երկիրն Իտալիան է։

Վատիկանի և Քվիրինալի միջև, ասում է «Avanti»-ն, գաղտնի բանակցութիւններ կան։ Մշակում են մի նոր կօնկօրդատ։ Իտալիայի թագաւորն ամենայարմար պաշտպանը կարող է լինել եկեղեցու շահերին։

Վատիկանի պետական քարտուղար կարդինալ Մերբիդէլ-Վալը, պապի խորհրդական Ալլիարդի, Սատօլլի և Վանուտէլլի կարդինալների հետ միասին, պապի համաձայնութեամբ, մշակել է մի նոր կօնկօրդատ Իտալիայի թագաւորի ու կաթոլիկ կղերի միջև։

Նոր դաշնագրի հիմքերը մասամբ յայտնի են, մասամբ էլ ենթադրվում են։

Պապը ճանաչելու է Վիկտոր-Էմմանուէլին Իտալիայի օրինական թագաւոր, իսկ ինքը հրաժարվելու է իր յաւակնութիւններից Հռոմի գահի վերաբերութեամբ։

Յայտնի է, որ Իտալիայի միութիւնից և Հռոմի պապական նահանգը գրաւելուց յետոյ՝ պապերը երբէք չեն հաշտվել այն մտքի հետ, որ իրանք այլ ևս աշխարհական ոչ մի իշխանութիւն չունեն։ Լևոն XIII տաղանդաւոր պապը յամառութեամբ պահում էր իր տիտղոսների մէջ «Թագաւոր Հռոմի» հնչիւն, բայց այժմ անմիտ բառերը։ Մի խօսքով, պապերը իտալական նոր թագաւորներին «ուզուրպատոր» էին կոչում և սպասում էին յարմար ժամանակի, որ Ֆրանսիայի օգնութեամբ յետ խլեն Հռոմի նահանգը։

Պապը անում է այդ մե՞ծ զիջումը։ Եւ ինչու չանէ.—ինչու՞ չը ծախել մի ապրանք, որ այլ ևս ոչ մի կօպէկ գին չունի։

Դրա փոխարէն Քվիրինալի կամ Արքունիքի ու Վատիկանի միջև վաղուց կտրված յարաբերութիւնները պէտք է վերանորոգվին։

Կղերն ստանալու է խոշոր փոխարինութիւն իր այդ զիջողութեան համար, բայց ինչ է այդ վարձատրութիւնը, դեռ որոշ յայտնի չէ։ Եղածները լոկ ենթադրութիւններ են։

Կարդինալ Կապէչէլատրօն պէտք է յանձնէ այդ նոր մշակված դաշնագիրը թագաւորին և մինիստր-նախագահ Ջիոլիտտիին։

Ասում են, որ իտալական վերջին ընտրութիւնների ժամանակ կառավարական կուսակցութեան փայլուն յաղթանակի մէջ մատ ունէին և եզուիտները, կաթոլիկ կղերը... Դա եղել է նոր ու սրտառուչ համաձայնութեան առաջին «եղբայրական» հարուածը առաջադէմներին, արմատականներին ու սոցիալիստներին։

Ասում են նոյնպէս, որ Ումբէրտօ թագաւորի այրին, մայր-թագուհին, մի կրօնամոլ կին, ծառայում է իբր հաշտարար միջնորդ պապի և արքունիքի միջև։

Որքան ճիշդ են այդ բոլոր լուրերը, չենք կարող դրականապէս պնդել։ Հաստատ փաստն այն է միայն, որ պապն արդէն իրաւունք է տուել հոգևորականներին մասնակցելու Իտալիայի ներքին քաղաքական գործերին։ Կարծեմ վերջերս «Voce della Sera» լրագիրն էր, որ այդ լուրը հաղորդել էր պաշտօնապէս։

Այդ իրաւունքն առաջ չէր տրված հոգևորականութեանը։ Միայն Քվիրինալի բարեկամ և Վատիկանի թշնամի հոգևորականներն էին, որ մասնակցում էին այդ գործերին։

Դա էլ մի նշան է, որ պապն ու թագաւորը հաշտվում են։

Այդ հաշտութիւնն անպայման պէտք է ունենայ խաւար, յետ պահող ու սև ազդեցութիւն Իտալիայի առանց այն էլ խաւար ու թշուառ ազգաբնակութեան վրա։

Խաժակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

4 դեկտեմբերի

ՉԻՖՈՒ, 3 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Պօրտ-Արտուրից եկած ռուսները հաստատում են եապօնական պաշտօնական զեկուցումների ճշդութիւնը ռուսական նաւերի նորերս ոչնչացման մասին և յայտարարում են, որ եապօնացիները կարող էին երկու ամիս առաջ ոչնչացնել ռուսական նաւատորմը, բայց, երևի, գերագասեցին թնդանօթները բերդի դէմ ուղղել։ Նաւատորմի ջնջումը ցոյց է տալիս, որ եապօնացիները Պօրտ Արտուրը վերցնելու յոյսը կորցրել են։ Եապօնացիները անցեալ ամիս կորցրին երեք ականանաւ, որոնք խորտակվեցին ականներից, երրորդը ջրասոյզ եղաւ յարձակման ժամանակ գիշերը դեկտեմբերի 1-ին։ Պատերազմը, որից յետոյ վերցրվեց Բարձր լեռը, եապօնացրներին 12,000 նստեց։ Նրանք կարող են գրաւել այդ լեռը միայն դիտելու համար։ Եապօնացիները չը գրաւեցին գլխաւոր ժարտկոցներից ոչ մէկը։ Երեք շոգենաւ, բեռնաւորված ուտեստի պաշարներով և ամունիցիայով, պատռեցին պաշարման գիծը վերջին երկու շաբաթվայ ընթացքում։ Ռուսների յոյսը, որ Պօրտ-Արտուրի բերդապահ զօրքը անձնատուր չի լինի մի քանի ամիսների ընթացքում,—գնալով մեծանում է։ Եապօնացիները վհատվում են ահագին, անօգուտ կորուստների պատճառով։ Եկած ռուսները երէկ հեռացան Պօրտ-Արտուրից։ Նրանք սարսափելի կերպով տանջվում էին բուքից, քիչ էր մնում սառչէին և առանց օգնութեան չէին կարողանում դուրս գալ ափը։ Նրանք բերեցին պաշտօնական շատ հեռագիրներ։

ՏՕԿԻՕ, 4 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Պօրտ-Արտուրից ստացված հեռագրի համաձայն, Ստեսսէլ բանակցութիւններ սկսեց եապօնացիների հետ հիւանդանոցները ռմբակոծութիւնից պաշտպանելու վերաբերմամբ։ Նա ուղարկեց Նոգին հիւանդանոցների զեստեղման յատակագիծը։

ՊԱՐԻԶ, 4 դեկտեմբերի։ (Հաւաս)։ Դեկտեմբերի 7-ին Հուլի դէպքը միջնորդ դատարանով քննելու համար կազմված յանձնաժողովի անդամները կընդունվեն նախագահ Լուբէից, և ապա կայցելեն Դէլկասէին։ Դրանից յետոյ նրանք անյապաղ կը գումարվեն հինգերորդ միջնորդ դատաւոր ընտրելու համար։ Կարծում են, որ մէկ նիստը բաւական կը լինի ընտրելի անձի վերաբերմամբ համաձայնութեան գալու։ Վերջինը, լուրերի համեմատ, կը լինի աւստրիական ծովապետ Շպաուն։

5 դեկտեմբերի

ԿՐՕՆՇՏԱԴՏ, 5 դեկտեմբերի։ Նաւատորմի, նաւահանգիստների գլխաւոր հրամանատարը և Բալտիական ծովի պաշտպանութեան հրամանատար փոխ-ծովապետ Բիբիլով ճանապարհ ընկաւ Լիբաւա։

ՄՕՍԿՎԱ, 3 դեկտեմբերի։ Ճիշդ չէ լրագրական այն տեղեկութիւնը, որ իբր թէ սիբիրեան ճանապարհի վրա կորել են 350 վագոններ օֆիցէրական տնտեսական ընկերութեան բեռնով։ Այդ ընկերութիւնը յայտարարում է, թէ ինքն գիտէ ուր են գտնվում նրա վագոնները։ Պատերազմից եկաւ պօրուչիկի աստիճան ստացած պատանի Տէպֆէր, որը պարգևատրված է Գէօրգի երեք շքանշաններով բաղմաթիւ կռիւներում մասնակցելու համար։ Տէպֆէրի կուրծքը դնդակահարված է և կըտրված է ոտքը։

ՕԴԷՍԱ, 6 դեկտեմբերի։ Ռուսական ընկերութեան շոգենաւով Եապօնիայից եկան 45 ռուս բժիշկներ և սանիտարներ, որոնք գերի էին ընկել եապօնացիների ձեռքը Տիւրենչէնի և Վաֆանգօուի կռիւներում, այն ժամանակ, երբ նրանք հաւաքում էին վիրաւորներին, դրանց թւում և բժիշկներ Շվէդով, Պոպովիչ և Ռիշկով, նոյնպէս և 12 զինուորներ, որոնց գերութիւնից ազատել էին եապօնացիները ի նկատի ունենալով նրանց կատարեալ անպէտութիւնը զինուորական ծառայութիւնը շարունակելու համար այլանդակվելու և վէրքերի պատճառով, նոյնպէս և եօթ հոգի ֆէլդշէրներ և սանիտարներ «Ռիւրիկ» կրէյսէրից, որը գերի էր Մատցուեսումում։ Ծովային պաշտօնեաները գնում են Կրօնշտադտ 7-դ նաւատորմային էկիպաժը, իսկ մնացածները—իրանց բնակավայրը։

ԲԷԼԳՐԱԴ, 4 դեկտեմբերի։ Ճշգրիտ աղբիւրից մեզ հաղորդում են, որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի փոխառութիւն անել։ Ֆինանսների մինիստրը ուղևորվում է արտասահման բանկային խմբերի հետ բանակցութիւններ սկսելու Վիէննայում, Պարիզում և Բերլինում։

ՍՏԱՆՑԱ ԼԱԲԻՆՍԿԱՅԱ, 3 դեկտեմբերի։ Լաբինսկայա ստանիցայի աղգաբնակութիւնը ճաշ տուեց Հեռաւոր Արևելք գնացող պլաստուններին։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 4 դեկտեմբերի։ Գեներալ-ադիւտանտ Բոբրինսկու մահվան կիսամեակի օրը հոգեհանգստեան պատարագ մատուցվեց և հոգեհանգիստ կատարվեց։ Ներկայ էին գեներալ-նահանգապետը, նրա օգնականը, ռուսաց դպրոցների ուսուցիչները և աշակերտները, հէլսինգֆօրսեան, ռուսական հասարակութիւնը և ֆինլանդական սենատի ներկայացուցիչները։

ԲԱԹՈՒՄ, 3 դեկտեմբերի։ Երեկոյեան 6 ժամին, քաղաքի ծայրում գտնվող քաղաքային հիւանդանոցի գրասենեակը ներս վազեցին չորս տեղացիներ։ Մահացու հարուածներ հասցնելով գլխին և սպառնալով մահով, յանցաւորները ստիպեցին վերակացուին տալ իրանց 1,500 ռուբլին, որ պատրաստված էր հիւանդանոցի ծառայողներին բաժանելու համար։ Յափշտակելով փողերը, չարագործները փախան։ Անկասկած է, որ յարձակվողների մէջ գտնվում էր հիւանդանոցի կարգերի հետ ծանօթ մի մարդ։—Հիմնվում է բանտարկեալների առաջին ռուսական տրտէլ։

ՀԱԱԳԱ, 4 դեկտեմբերի։ Դիպլոմատիական կօնֆէրէնցիան, որ հրաւիրված էր հիւանդանոցային նաւերի դրութեան հարցը քննելու համար, համաձայնեցաւ փոփոխութեան ընդունեց յանձնաժողովի մշակած համաձայնութեան նախագիծը։

ՎԻԷՆՆԱ, 5 դեկտեմբերի։ Աւստրիական պատուիրակները եկող շաբաթվայ սկզբին ճանապարհ կընկնեն Բերլին՝ Գերմանիայի և Աւստրօ Ունգարիայի միջև առևտրական դաշնագիր կապելու մասին բանակցութիւնները վերսկսելու համար։

ՊԱՐԻԶ, 5 դեկտեմբերի։ «L'Echo de Paris» լրագիրը հրատարակեց Պարիզի քաղաքային խորհրդի նախագահի նամակը։ Նախագահը, ուղարկելով իր լուման ի նպաստ Պօրտ-Արտուրի պաշտպանների լրագրի բացած հանգանակութեանը, ասում է. «Ինչպիսի էլ լինի այն սարսափը, որ ներշնչում է այդ զարհուրելի պատերազմը, որ ծածկել է Մանջուրիան դիակներով, նա չէ կարող խլացնել զարմանքի զգացմունքը Պօրտ-Արտուրի բերդապահ զօրքի հերոսութեան առաջ։ Ձեր տօնախմբութիւնը վերաբերվում է ռուսական զօրքին և ռուսաց ազգին և այդ պատճառով դուք լաւ արեցիք՝ մասնակցութեան հրաւէր կարդալով բոլոր ֆրանսիացիներին»։

5 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Գեներալ-ադիւտանտ Ստէսսէլի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թ. նոյեմբերի 12-ից. «Բաղդաւոր եմ համարում ինձ զեկուցանելու Ձերդ Կայսերական Մեծութեան, որ նոյեմբերի 7-ին, զօրեղ ռմբակոծութիւնից յետոյ, եապօնացիները գրոհեցին հիւսիս-արևելեան ճակատի մարտկոցներից մէկի վրա. նրանց ոյժերի մի մասը յարձակվեց բրուստվէրի վրա, բայց միահամուռ կրակով և սուիններով կոտորվեցին և յետ քշվեցին դէպի փոսերը։ Պահեստամասերը ցրվեցին մեր շրջապնէլներից։ 8-ից մինչև 10-ը նրանք կատաղաբար ռմբակոծեցին մարտկոցները և յամառաբար, չը նայելով մեծ կորուստներին, նոյն հիւսիս-արևելեան ճակատի երկու մարտկոցների խրամատների վրայով անցկացան։ Նոյեմբ. 10-ի երեկոյեան 5½-ին, կրակը զօրացնելով, եապօնացիները մի անգամից գրոհ տուին այդ ճակատի մի քանի ամրութիւնների վրա, գրաւեցին խրամատների մի մասը, բայց սուինային կատաղի ձեռնամարտից յետոյ՝ մեր պահեստազօրքը կոտորեց նրանց։ Փիշերվայ ժամը 12 ին եապօնացիները նորից կրկնեցին շտուրմը և գրաւեցին խրամատների մի մասը, բայց նորից ոչնչացվեցին սուիններով և 11-ի առաւօտեան ժամը 2-ին ամեն ինչ վերջացած էր և Ձերդ Կայսերական Մեծութեան հերոսական զօրքերը կարող էին ազատ շունչ քաշել և սկսել վերանորոգութիւնը ռմբակոծութեան հասցրած ջնջված մասերի։ Ամեն ինչ մնաց մեր ձեռքին։ Մեր կորուստներն աննշան են։ Եապօնացիները 7-ից մինչև 11 կորցրել են 2,000-ից աւելի։ Բոլորը հերոսաբար կռուեցին։ Առանձնապէս աչքի ընկան գեներալ Կօնդրատենկօն, Նիկիտինը և Գօրբատօվսկին, փոխգնդապետ Նաումենկօն, կապիտան Բուլգակովը և Վիսօցկին, պօդպօրուչիկ Վիլմանը, II կարգի կապիտան Գերասիմովը և Բախմետեվը, Պոդգուրսկի-Գէյնէր և Բազվօզով լէյտէնանտները և եգէրմէյստէր Բալաշովը։ Քաղաքը և նաւահանգիստը ամեն օր ռմբակոծվում են։ Շէնքերի մի մասը կործանված է։ Նաւահանգիստը փնտվել է։ Բերդապահ զօրքի ոգին գերազանց է»։

Գեներալ-ադիւտանտ Ստեսսէլի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1904 թ. նոյեմբերի 15-ից. «Նոյեմբերի 13 և 14-ին տեղի ունեցան Արտուրի շտուրմերից ամենակատաղիները։ Սկսվեցին դրանք լոյս 13 ի գիշերը յատաջանալով դէպի մեր ծայրայեղ ձախ թևը և Ադաւնու ծովախորշը։ Եապօնացիները յետ են մղված մեծ կորուստներով։ Նոյն գիշերը յարձակվեցին և Պանլուունշանի վրա, բայց յետ մղվեցին։ Յետ քշվեցին նաև Բարձր սարի վրայից։ Յետոյ 13-ը սկսվեց թնդանօթաձգութեամբ և հզօր յարձակումներով հիւսիս-արևելեան ճակատի ամրութիւնների և նրանց առջևը եղած խրամատների դէմ։ Երկու անգամ խրամատները ձեռքից ձեռք անցան։ Սակայն լոյս 14-ի գիշերը մենք վերջնականապէս դուրս քշեցինք եապօնացիներին սուիններով։ Մարտկոցներից մէկի բրուստվէրը նրանք պայթեցրին, բայց լոյս 14 ի գիշերը նրանց դուրս քշեցին։ Մի ուրիշ մարտկոցի վրա նրանք պարկեր դարսեցին, բայց արտիլէրիան ցրեց։ Երեկոյեան ժամը 10 ի մօտերը եապօնացիները խոշոր ոյժերով գրոհ տուին ձախ թևի կողմի բաստրէաներից մէկի վրա և նախ տիրեցին նրա մի մասին, բայց մեր հերոսները սուիններով դիմեցին. ահագին թիւ սպանվածներ թողնելով, յետ փախան։ Ամբողջ ճակատի վրա անաջողութիւն կրելով, եապօնացիները զօրեղ կրակ արին բերդի ներքին մասի վրա, որը շարունակվեց մինչև 14-ի առաւօտեան ժամը 5 ը։ Աստուածային օգնութիւնը, մեզ առաքված Թագուհի Կայսրուհու ծննդեան այդ բարձր-ուրախարիթ օրը, մեզ նոր յաղթանակ պարգևեց։ Այդ զարհուրելի շտուրմը յետ մղելու մասին բաղդ ունեմ զեկուցանելու Ձերդ Կայսերական Մեծութեան»։

Նոյեմբերի 17 ից. «14 ից սկսած եապօնացիները կատաղի կերպով ռմբակոծում են մեծ ոյժերով անընդհատ գրոհ են տալիս Բարձր Սարի վրա։ Նրանց շտուրմերը յետ մղվեցին»։

Նոյեմբերի 19-ից. «Նոյեմբերի 7-ին սկսված 12-օրեայ շտուրմն այս գիշեր վերջնականապէս յետ է մղված։ Երջանիկ եմ, որ զեկուցանում եմ, թէ այդ անել կարողացան միայն Ձերդ Մեծութեան հերոս զինուորները։ Այդպիսի կատաղի շտուրմ դեռ չէ եղել։ Գերիների և չինացիների ասելով, եապօնացիները կորցրել են 20,000 հոգուց ոչ պակաս։ Խնդրում ենք Ձեր աղօթքները՝ Թագաւոր, և Մայր Թագուհիներին, ինչպէս երևում է այդ աղօթքներն են մեզ փրկում։ Ինչպէս Ձերդ Մեծութեան գեներալ-ադիւտանտ, Ձեր Անունից զօրքերին յայտնեցի Ձեր կայսերական շնորհակալութիւնը»։

Նոյեմբերի 23 ից. «Երէկ առաւօտեան ժամը 7 ից եապօնացիները, ժողովելով իրանց բոլոր ուժերը, սկսեցին Բարձր սարի շտուրմը և միաժամանակ ռմբակոծեցին 11 և 16 դիւյմանոց թնդանօթներով։ Ամբողջ օրը կատաղի կռիւ էր։ Մենք յետ մղեցինք 3 շտուրմ։ Երեկոյեան դէմ եապօնացիները գրաւեցին լեռան գագաթը և իսկոյն դրին 2 գնդաձիգ։ Վիրաւորվածների թիւն է հիւանդանոցների տեսուչ գեներալ Ցէրպիցկի և փոխ-զնդապետ Բուտուսով։ Գնդապետ Իլման քաջութեան հրաշքներ գործեց»։

Գեներալ-ադիւտանտ Ստեսսէլի ամենահպատակ հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան անունով 1904 թ. նոյեմբերի 27-ից. «Նոյեմբերի 27 ին։ Եապօնացիները նոյեմբերի 23-ին գրաւեցին Բարձր լեռը։ Աւազանում կանգնած մեր նաւերը ջնջվում են եապօնացիների 11 դիւյմանոց ռումբերից։ Մեռաւ վէրքից գեներալ Ցէրպիցկի։ Զօրքերի ոգին գերազանց է։

6 դեկտեմբերի

ԿԱԼՈՒԳԱ, 5 դեկտեմբերի։ Զէմստվօի ժողովը հաստատել է, որ Կալուգայի նահանգում հղել են բորոտութեան մի քանի դէպքեր։

ԿԻԵՎ, 5 դեկտեմբերի։ Վերջնական քննութիւնները պետական բժշկական հարցաքննող յանձնաժողովում համալսարանում նշանակված են դեկտեմբերի 15-ին։

ՉԻՖՈՒ, 4 դեկտեմբերի։ «Ռէյտեր»։ Երէկ ջնջայով եկած փոքր զօրաբաժնի հրամանատար Միշչէնկով, որը ոտքից վիրաւորված էր 203 մէտրանոց բլրի վրա կռիւ ժամանակ դեկտեմբերի 2-ին, հաղորդում է հետեւեալը դէրբը գրաւելու մասին. Նրա խօսքով, իրան վստահացած հեռագիրները պարունակում են գլխաւորապէս ստատիստիական փաստեր եապօնական արտիլէրիական կրակի վերաբերմամբ։ Միշչէնկով պատմում է, որ 203 մետրանոց բլրի վրա կռիւը շարունակվում էր անընդհատ նոյեմբերի 15-ից։ Եապօնացիները յաճախ ստիպված էին լինում բարձրանալ լանջերով, հնարաւորութիւն չունենալով պատսխանել ռուսների սարսափելի հրացանային կրակին։ Ամբողջ վաշտեր ոչնչանում էին։ Երկու կողմերն ևս ցոյց էին տալիս զարմանալի քաջութիւն։ Բլուրի լանջերը ծածկված էին դիակներով։ Գետինը ծածկող ձիւնը ներկվեց արիւնով։ Վերջապէս ռուսները, անելով բոլորը, ինչ կարող էին բլրի պաշտպանութեան համար, յետ քաշվեցին, թողնելով հաւասար բլուրների, մանաւանդ Լեաոտեշանի արտիլէրիային, դուրս մղել եապօնացիներին գագաթից։ Երբ եապօնական դրօշակակիրը ամրացրեց դրօշակը բլրի գագաթին, ռուս ֆէլդֆէբէլը, յետ նահանջող ընկերների շարքերը միացնելով յետ վերադարձաւ, և, յարձակվելով դրօշակի վրա, սկսեց պատառոտել նրան եղունգներով և ատամներով, մինչև չընկաւ՝ եօթը գնդակներից մահացած։ Երբ եապօնացիները, ռուսական արտիլէրիայի կրակով յետ մղված, թողեցին բլրի գագաթը, ռուսները նորից գրաւեցին նրան։ Երկրորդ և երրորդ շտուրմերը կրկնութիւն էին առաջնի, սակայն երկրորդը ամենաարիւնահեղն էր, որովհետև ձեռնամարտը երկար շարունակվեց։ Երրորդ շտուրմի ժամանակ տեղի ունեցաւ հետևեալ դէպքը. երբ դրօշակակիրը, հասնելով բլրի գագաթին, սկսեց դրօշակն ամրացնել, նա մեռած ընկաւ, ձեռքից բաց չը թողնելով կոթը. մէկ ուրիշ եապօնացի յարձակվեց դրօշակի վրա, բայց շուտով նոյնպէս ընկաւ. վեց ուրիշ եապօնացիներ նոյն վիճակին ենթարկվեցին։ Երբ իններորդ եապօնացին իր ընկերների օրինակին հետևելով մօտ վազեց դէպի դրօշակը, ռուս օֆիցէրը աղաղակեց. «Մի կրակէք դրօշակակրի վրա, դրօշակը յամենայն դէպս կամրացնվի»։ Երրորդ յարձակման ժամանակ եապօնացիները դիմեցին մի օտարոտի միջոցի. կտրած ծառերի ահագին կոյտեր հաւաքելով, նրանք այրեցին այդ ծառերը։ Կրակը և ծուխը, սաստիկ քամուց տարածվելով, ստիպեցին ռուսներին շտապով յետ նահանջել։ Կռուի այդ վայրկեանը 12,000 մարդ նստեց եապօնացիներին։ Ռուսները կորցրին 2000։ Խրամատներում հոսում էին արեան գետակներ։ Ամեն տեղ ընկած էին սպանվածներ։ Կարճ զինադադարի ժամանակ վերջիններս թաղվեցին։

6 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Գաղտնի խորհրդականի աստիճան է տրվում Բագուի նահանգապետ իշխան Նակաշիձէին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Մեծ Իշխան Դմիտրի Կոնստանտինովիչին գերազանց ծառայութեան համար շնորհվում էր գեներալ-լէյտենանտի աստիճան նշանակելով գեներալ-ադիւտանտ. Մեծ Իշխան Բորիս Վլադիմերովիչին տրվում է շտաբ-բոտմեստրի աստիճան։—Շնորհված է ոսկէ սուր «Քաջութեան համար» մակագրութեամբ եապօնացիների դէմ ցոյց տուած քաջութեան համար Փլրգել ադիւտանտ շտաբ-բոտմեստր Մեծ Իշխան Բորիս Վլադիմերովիչին։—Շնորհվում է Սպիտակ Արծուի շքանշանը գեներալ-լէյտենանտներ Մալամային և Էրիստովին։—Վեատկայի նահանգապետի հաղորդագրութեան համեմատ, նոյեմբերի 26-ին Վեատկայի և Սլոբոդսկու գաւառների գործատների բանտարկեալների մէջ, որոնք կիսամուշտակներ, երևացին սիբիրական ախտով հիւանդացողներ, այնպէս որ հոկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 1-ը 45 գործատներում հիւանդութեան 247 դէպքեր եղան։ Հիւանդութեան պատճառն բանտարկեալների մէջ կիսամուշտակների համար պատրաստվող մորթիներն են, այդ պատճառով հրամայված է ոչխարի մորթին, նախ քան գործատնում պատրաստվելը սուլէմայով և ֆորմալինով դէզինֆէկցիայի ենթարկել։ Անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար հիւանդանալու տեղերը ուղարկված են անասնաբոյժներ և մասնագէտ-բակտէրիոլոգ։ Կիսամուշտակներ բաց թողնելը դադարեցրված է։

ՉԻՖՈՒ, 4 դեկտեմբերի։ (Ռէյտէր)։ Գիշերը

եապօնական մի քանի ռումբեր ընկան Պօրտ-Արտուրում հիւանդանոցները և սպանեցին մի քանի հիւանդների. մնացած հիւանդները փախան ձիւնով ծածկված փողոցներով։ Ստեսսէլի կարգադրութեամբ Պօրտ-Արտուրի ամբողջ ազգաբնակութեանը տրվում են երեք ամսվայ համար բաւարար բաժիններ։ Ռազմամթերքը կը բաւականայ շատ աւելի երկար ժամանակ։ 203 մէտր բարձրութեան բլրի վրա տեղի ունեցած կուի ժամանակ եապօնական ականաւորը մատեցան նաւահանգստի մուտքին։ Ստեսսէլ յանձնարարեց ծովապետ Վիրէնին յետ մղել նրանց յարձակումը։ Ծովապետը ուղարկեց «Սեվաստոպոլ» զրահակիրը դէպի արտաքին նաւակայարանը, ուր և նա խաբիսխ ձգեց, իւրաքանչիւր գիշեր վերադառնալով նաւահանգիստ՝ ցերեկն անցկացնելու համար։ Նա ջրասոյզ է արել եապօնական մի ականանաւ։ «Սեվաստոպոլի» վրա փլասված է միայն վերին մասը։ Վիրէնի ձեռքը, երբ նաւահանգստով նա անցնում էր դէպի «Ռէտվիզան», թեթև կերպով վիրաւորված է։

ՉԻՖՈՒ։ Դեկտեմբերի 6-ին (Ռէյտէր)։ Պօրտ-Արտուրից ուղարկված եապօնական սուրհանդակը պատմում է տեղեկութիւններ այն յարձակումները մասին, որոնք գործված են Իցզուշան և Բօրդի ամրոցների վրա։ Եապօնցիները ոմբակոծում էին վերջին ամրոցը երեք օրվայ ընթացքում, սկսած նոյեմբերի 20-ից։ Այդ մարտկոցի շուրջը ռումբերը փորել էին 600 մէտր երկարութեան և 10 մէտր լայնութեան մեծ փոս, լցրել էին նրան նաւթով և ծածկել ծառերով ու ծղնոտով։ Եապօնացիների յարձակման ժամանակ՝ նրանցից շատերը ընկան այդ փոսի մէջ։ Ռուսները էլէքտրականութեամբ վառեցին նաւթը. մի քանի հարիւր եապօնացիներ այրվեցին կրակի մէջ։ Հրդեհը շարունակվեց ամբողջ գիշեր։ Հետևեալ օրը 152 ռումբեր գերի ընկան։ Եապօնացիներին աջողվեց գրաւել բոլոր դիրքերը. մարտկոցի վրա եապօնական դրօշակի հետ միասին բարձրացրված է նաև չինական դրօշակ։ Այդ դրօշակի բարձրացնելու պատճառը չէ պարզված։—Մի ռումբ պոկեց եապօնական գնդերներից մէկի ձեռքը և ոտքը։—Պօրտ-Արտուրից եկած ռումբերը հետևեալ կերպով են հաշուում եապօնական կորուստները.—Նոյեմբերի 8-ից մինչև 24-ը 203 մէտր բարձրութեան բլրի վրա—18 000, Բօրդիի վրա—10,000, Իցզուշանի վրա—9,000։

ՏՕԿԻՕ։ Դեկտեմբերի 6-ին (Ռէյտէր)։ Պօրտ-Արտուրից ստացված բոլոր տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ բերդապահ զօրքի դրութիւնը յուսահատական է դառնում։ Գործողութիւնները հիւսիս-արևելեան մարտկոցների դէմ այնքան աջող են գնում, որ մի քանի տեղերում տարածութիւնը եապօնացիների և ռուսների մէջ 12 մէտրից պակաս է։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

3 դեկտեմբերի

Բօրսայի դիսկոնտը	6—7½%	»
Պետական 4% բենտան	92— —	»
I Խաղար. տոմսերը	423— —	»
II » »	317½ —	»
III » »	264— —	»
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — —	»
Բաղուի » » »	— — —	»
Թիֆլիսի հող. բանկի 5% . . .	— — —	»
» » » 4½% . .	— — —	»
Բաղուի նաւթ. Ընկ. . . .	426— —	»
Կառպիական Ընկ.	5476— —	»
Մանթաշեան և Ընկ.	244— —	»
Նոբէլի և Ընկ.	10460— —	»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԼՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի աբանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԶԻԿՈՎՆԻ—9—10 ժ. աչքի. նոլքին և նեա դային
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, լենկսկ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Գ. Ա. ԹՈՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1 1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ տատանաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆ—1½-2 ժ. մանեարարձութեան և կանանց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ռ. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Պ. Ս. ԵՐԳԵԶԻՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ս. ՍՈՎԱՆԻՏԵԱՆ—տանը. ծոցկատար և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիաների հատար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և զիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Լելիամինովսկայա փողոց № 8։ (ե.ռ.) 48—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. Նաւասարդեան

տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 66—100

Ս. Ց. ՄԱՏԻՆԵԱՆՑԻ

գրականական պիտոյից մագազինը (Միքայէլ. մաղազին) միշտ պահում է մեծ ընտրութիւն

100,000 ԲՍՑ ՆԱՄԱԿՆԵՐԻ 100,000

Նորութիւններ ստացվում են անընդհատ։
Գինը 2, 3, 5, 8, 10 15 և 20 կոպէկ։
Վաճառականներին մեծ զիջում. գաւառներից ստացված պատուէրները կատարվում են իսկոյն։ (Ս. Հ.) 5—6

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Ընդունում է յատկապէս միզանցքաստեղական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Բարիշևսկի № 1, «Պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆոն № 11. 9—10

ՄԱՅԿՕՊՈՒՄ

Մի հայ ընտանիքում հարկաւոր է մի հայ օրիորդ 3 երեխայի նայելու և սովորեցնելու հայերէն, ֆրանսերէն ու ռուսերէն։ Երեխաներից երկուսը գիտեն հայերէն գրել կարդալ։ Ցանկացողները թող դիմեն—Майкопъ, Куб. об. Вартану Сагинову.
(հ. շ. կ. ռ.) 3—5

Երդուեալ հաւատարմատար

Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ

„Практическое Руководство“

для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.

Գինն է 1 բուբլի։

Վաճառվում է Թիֆլիսում. կենտրոնական, Խիղդէկելի և Գուտաէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) 10 օրինակից աւելի պատանդողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ հ. շ. 9—30

I

Յովհ. Արաբաջեանի

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ա., բ. և գ. տարի

Դիմել հետևեալ հասցէով՝ Александрополь, М-lle Сирануйшѣ Арабаджіанцъ.

II

Յովհաննես Արաբաջեանի նոր հասցէն՝

Ростовъ н/д., Уголь Пушкинской ул. и Большого проспекта д. № 152 Оболешевой.
Ս. Շ. 10—10

Շարունակվում է

Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ լոյս տեսնող

Ազգագրական Հանդէսի

XI և XII գրքերի

Բաժանորդագրութիւնը։

Բաժանորդագինն է 3 բուբլի

XI գիրքն արդէն լոյս է տեսել, իսկ XII լոյս կը տեսնի այս տարվայ վերջին։ Նախկին գրքերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով։

Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Саперная 5 Тифлисъ. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Զեռնարկութիւն Կայսերական Թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի

Այսօր, երեքշաբթի, դեկտեմբերի 7-ին, Կայսերական Թատրոնների արտիստուհի Ն. Ա. Պապայեանի 4-րդ գաստրոլ, մասնակցութեամբ տ.տ. Միխայլովայի, Բունակովայի, Խարիտոնովայի. պ.պ. Բոգդանովիչի, Օբրազցովի, Դալեցկու, Զալինսկու և Մուրատովի. Պարերը կը դնէ բալետմէյստր Ե. Ի. Զիովասի. Գրիմա-բալերինա Ե. Ս. Լենչեվսկայա։

Կը ներկայացվի

«ԵՎԳԷՆԻՅ ՕՆԵԳԻՆ»

օպերա 3 գործ. 5 պատկ. երաժ. Չայկովսկու։

Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։

Վաղը, չորեքշաբթի, դեկտեմբերի 8-ին, վրաց դրամատիական ընկերութեան ներկայացում, բենեֆիս Վ. Լ. Գունիայի կը ներկայացվի I «ՍՆԱՆԿՈՒԹԻՆ», 3 գործ.։ II «ԱՐԿԱՆՆԵՐ», կամ. 2 գործ.։ Հինգշաբթի, դեկտեմբերի 9-ին, մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի, կը ներկայացվի ՄԱՕՆ օպերա, 5 գործ. երաժ. Մասսընէի։

Պատրաստվում են ներկայացնելու ՄԱՆԴԱՐԻՆԻ ՈՐԴԻ, օպեր. 1 գործ. երաժ. Կիւի.

Տոմսակները ծախվում են։

1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլէր

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Երեքշաբթի, դեկտեմբերի 7-ին, Թիֆլիսի Ժողովարանի սիրողների խումբը, անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կը ներկայացնէ

առաջին անգամ ժողովարանի բեմի վրա

«ՍԽԱԼ ՀԱՇԻԻ»

կամ. 4 գործ. հեղ. Ա. Երիցեանի։

Մասնակցում են՝ օր.օր. Յովհաննիսեան, Աբիսողոմեան, Հովհաննիսեան. պ.պ. Շիրինեան, Լաշքարեան, Սարեան, Զիլիքաչյեան, Զալարեան. Նազարբէգեան, Կարապետեան, Մակարեան։

Տեղերի գները 1 բուբլ. մինչև 30 կոպ.
Սկիզբը ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան։
Ագակերաներին մուտքը արգելվում է։
2—2 Բեժիսսոր Գ. Վ. Միքաղեան

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլոլակի փող. № 6.
(ռ. օ.) 12—50

Ֆինանսների նախարարութեան իրաւասութեան տակ գտնվող

ՀԱՅՈՒՄՊԱՀՈՒԹԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

Հեղինակ «Առևտրական, գրագրական և նաւթարդիւնաբերութեան հաշուապահութեան ձեռնարկի», որ ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից ընդունված է իբրև օժանդակ ձեռնարկ առևտրական դպրոցներում և նրանց գրադարաններում

ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ

Երկու սեռի անձանց՝ գործնական ձևով հաշուապահութիւն 4½ ամսում։
Պարապմունքի առարկաներն են.

1) Իտալական կրկնակի հաշուապահութիւն արդիւնագործութեան բոլոր ճիւղերի վերաբերեալ, վաճառականական, բանկային, յանձնարարական. գործարանական, նաև նաւթարդիւնաբերական և նաւթագործական հաշուապահութիւն։ 2) Առևտրական թուաբանութիւն։ 3) Առևտրական թղթակցութիւն։ 4) Մուրհակային և առևտրական օրէնքներ։ 5) Վայելչագրութիւն և ուղղագիր ամենավաղ ձեռագրի։ 6) Թուաբանութիւն համբիչի վրա։ 7) Դրելու վարժութիւն «Բէժենկսօնի» գրելու մքենայի վրա (կամաւոր)։

Կուրսերի համար դասատուներ են հրաւիրված համալսարանական կրթութիւնով և իրանց գործի մասնագէտ մարդիկ, որոնք հաստատվել են իրանց պաշտօնում ֆինանսների նախարարութեան ուսումնական բաժնի կողմից. գեղագրութեան համար ևս հրաւիրված է մի գեղագիր նկարիչ։

Ընդունելութիւն ամեն օր ժամը 5-ից մինչև 7-ը երեկոյեան։ Պարապմունքները սկսվում են 1905 թ-ի յունվարի 15-ից պարբերաբար ամեն 4½ ամիս, ամենայն օր ճաշից յետոյ 60 բուբլի վճարով ամբողջ դասընթացքի համար։

Դասընթացքը աւարտողներին տրվում են, ֆինանսների նախարարութեան թոյլատրված ծրագրի համաձայն, սերտիֆիկատներ։

Դրանից անկախ, բացված է քիչ պատրաստութիւն ունեցող անձերի համար առանձին լրացուցիչ և կրկնողութեան կուրսեր ռուսաց լեզուի և թուաբանութեան համար։

Ցանկացողներին խնդրում են դիմել գրաւոր կերպով կամ անձամբ կուրսերի հիմնադրին՝ Թիֆլիսում, Н. В. Абрамяну, Николаевская ул. № 46, ամենայն օր։ Ծրագիրն ուղարկվում է ձրի։

Վերևում յիշած ձեռնարկը ծախվում է Ռուսաստանի բոլոր գրավաճառանոցներում։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ (հ. կ. ե.) 4—20

Լոյս տեսան

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ

№ 5, 7, 8 գրքերը

№ 5—ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի

I հատոր, երկրորդ տպագրութիւն, փոփոխած, լրացրած և էժանացրած

(Առաջին տպագրութիւնը 453 էջ էր և արժէր 1 ր. 50 կ., ներկայ հրատարակութիւնը 548 էջ է, աւելի մեծ ծաւալով և արժէ 1 ր. 20 կ.)։

Ճանապարհածախսով 1 ր. 40 կ.

Տասը հատ միանգամից գնողը ստանում է 10% զիջուն և ճանապարհածախս չէ վճարում։

№ 7—«ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ», Ա. Բ. Մխիթարեանի, գինն է 40 կ.։

№ 8—«ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐԸ», գրաբ Իբսէնի, գինն է 50 կ.։

Այս երեք գրքերը միասին գնողը ճանապարհածախս չէ վճարում։

—

Դիմել Հանրամատչելի Գրադարանի խմբագիր-հրատարակիչ Հ. Առաքելեանին, Թիֆլիս, «Մշակի» խմբագրութիւն։

ՇԱՂԿԻՕ-ԴԸ-ԿՕԼՕՆ

ԲՐՕԿԱՐ ԵՒ ԸՆԿ.

հնարածը, մրցութիւնից բարձր յատկութիւնով

Grant Prix

Պարիզի 1900 թ-ի ամենաբարձր գինը։

5—1905—10 4—10

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го декабря 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15.